ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/14138-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կինեմատոգրաֆիայի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-910-26.03.2021-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 416 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-910-26.03.2021-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.«Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայֆիլմ» ինստիտուտ անվանումով մշակութային հիմնադրամ է, որն ունի բացառիկ լիազորություններ պետական բյուջեի և դրամագլխի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն իրականացնելու նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման գործում:

Նախագծով ազգային մարմնին վերապահված իրավասությունների շրջանակի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ առաջարկվում է վերջինիս օժտել հանրային իշխանական լիազորություններով:

Այս առումով, սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածի համաձայն՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են՝ նախարարությունները, ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինները, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք)՝

1) 1-ին հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ օրենքը սահմանում է պետական կառավարման համակարգի մարմինների շրջանակը և կազմավորման կարգը.

2) 2-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան, պետական կառավարման համակարգի մարմիններն են՝

նախարարությունները, ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները:

Վերոգրյալի համատեքստում հայտնում ենք, որ պետական կառավարման համակարգում վերը թվարկվածներից բացի հանրային իշխանությամբ օժտված որևէ այլ մարմնի ստեղծումը կհակասի վերոնշյալ կարգավորումներին: Բացի այդ, նախագծի 9-րդ հոդվածով թվարկվող ազգային մարմնի լիազորություններն անմիջականորեն առնչվում են պետության ներքին քաղաքականության մշակմանը և իրականացմանը, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածով սահմանվում է, որ պետության ներքին և արտաքին քաղաքականությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է ՀՀ կառավարությունը:

Միաժամանակ ազգային մարմնի ստեղծումը հակասում է նաև հանրային կառավարման բնագավառում կառավարության ծրագրով հռչակված մոտեցումներին և ոլորտում իրականացվող քաղաքականությանը, որոնք հանգում են նրան, որ պետական կառավարման ուռճացված համակարգը՝ իր տեսանելի և անտեսանելի մարմինների չարդարացված ծավալով, գործառույթների և ոլորտների կրկնողությամբ, դրա հետևանքով առաջացած անարդյունավետությամբ, պատասխանատվության մեխանիզմների անորոշությամբ, հիմնազուրկ բեռ է հարկ վճարողների համար և լրջագույն խոչընդոտ՝ Հայաստանի մրցունակության բարձրացման ճանապարհին: Անհրաժեշտ է ծախսարդյունավետ, դինամիկ, ճկուն և մրցունակ պետական կառավարման համակարգ: Այս ուղղությամբ կառավարությունը շարունակաբար վեր է հանելու պետական բոլոր գերատեսչությունների կրկնվող գործառույթները, և վերջիններիս օպտիմալացման արդյունքում բարձրացվելու են պետական գերատեսչությունների ծախսարդյունավետությունը և աշխատանքի արդյունավետությունը:

Պետական ռեսուրսների կառավարման մասով՝ կառավարության մոտեցումները հանգում են հետևյալին՝

1) ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի արդյունավետ, օգտավետ և խնայողաբար.

2) հանրային յուրաքանչյուր մարմին կամ կազմակերպություն, անկախ կազմակերպաիրավական կամ այլ առանձնահատկություններից, պետք է գործի օրենքով սահմանված որոշակի լիազորությունների շրջանակում՝ իրականացնելով տվյալ մարմնի նպատակներին համապատասխանող և դրանցից բխող գործառույթներ, չպետք է լինեն կրկնություններ, այլընտրանքային, զուգահեռ,

փոխարինող կամ թաքնված համակարգեր և (կամ) տվյալ մարմնին ոչ բնորոշ գործառույթներ.

3) քաղաքականությանը վերաբերող գործառույթները պետք է համախմբվեն և իրականացվեն պետական մարմինների կառուցվածքում՝ որպես մասնագիտացված ստորաբաժանումներ.

4) օժանդակ, սպասարկող, աջակցող և մասնագիտացված այլ գործառույթների մասով պետք է դիտարկել դրանք մասնավորին արտապատվիրելու հնարավորությունը և նպատակահարմարությունը: Անհնարին կամ ոչ նպատակահարմար լինելու դեպքում նման գործառույթները պետք է կազմակերպվեն տվյալ մարմնի աշխատակազմում գործող համապատասխան ստորաբաժանումների միջոցով՝ բացառելով նույնանման գործառույթների՝ ներառյալ հաստիքների և ստորաբաժանումների մի քանի միավորների կողմից իրականացումը: Այս նպատակներով պետության կողմից նոր ԾԻԳ-երի, ՊՈԱԿ-ների, հիմնադրամների, ՓԲԸ-ների և (կամ) այլ կառույցների ստեղծումից պետք է ձեռնպահ մնալ, իսկ գործող կառույցների գործունեությունը դադարեցնել (լուծարել, միավորել կամ այլ կերպ դադարեցնել պետության մասնակցությունը), եթե նշված մոտեցումների ներքո չի հիմնավորվում դրանց ստեղծման կամ գոյության անհրաժեշտությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ Սահմանադրությունը բացառում է հանրային իշխանությանը բնորոշ գործառույթների ու լիազորությունների փոխանցումը Սահմանադրությամբ չնախատեսված սուբյեկտներին, և դրան համապատասխան՝ ՀՀ կառավարությունը որդեգրել է ծախսարդյունավետ, դինամիկ, ճկուն և մրցունակ պետական կառավարման համակարգի ապահովման և այլ օժանդակ կառույցների ստեղծումից ձեռնպահ մնալու, իսկ գոյություն ունեցողների գործունեությունը դադարեցնելու քաղաքականությունը, ինչի պայմաններում հանրային իշխանական լիազորություններով օժտված ազգային մարմնի ստեղծումը սկզբունքորեն անընդունելի է, չի բխում Սահմանադրությամբ և ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված դրույթներից:

2. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 10-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ հոդվածի 2-րդ մասով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դրամագլխի և ազգային մարմնի վերաբերյալ կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում ազգային մարմնի անվամբ նախատեսվում է բացել արտաբյուջետային հաշիվ (դրամագլուխ), որից հատկացված միջոցների նպատակային օգտագործման

նկատմամբ վերահսկողությունը և ֆինանսավորման իրականացումը պետք է ապահովվի ազգային մարմնի կողմից:

Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ առաջարկվող կարգավորումները սկզբունքորեն անընդունելի են հանրային ֆինանսների կառավարման բնագավառում կառավարության կողմից իրականացվող քաղաքականության համատեքստում: Այսպես՝ իր գործունեության ծրագրով կառավարությունը նպատակ է դրել վերանայել պետական կամ համայնքային հիմնարկների արտաբյուջետային հաշիվներ ունենալու քաղաքականությունը՝ ապահովելով սահմանված դեպքերում առաջացող դրամական միջոցների մուտքը համապատասխան բյուջե և հետագայում, ըստ անհրաժեշտության, այդ գումարների բաշխումն այդ բյուջեներից:

Վերոնշյալի հիմքով դեռևս 2019 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է կառավարության նախաձեռնությամբ ներկայացված օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որով սահմանափակվել է պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների՝ արտաբյուջետային հաշիվներ ունենալու հնարավորությունը:

Միաժամանակ՝ դրամագլխի ստեղծումը հակասում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի հիմքում դրված բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության, բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքներին.

ա. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված բյուջետային համակարգի հիմքում դրված սկզբունքներից է բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը, որը նշանակում է, որ օրենսդրությամբ սահմանված բյուջեների մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման բյուջեներում: Պետական և համայնքների բյուջեների բոլոր ելքերը ենթակա են ֆինանսավորման՝ բյուջետային համակարգում կուտակված բյուջետային միջոցների հաշվին,

բ. բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը նշանակում է, որ բյուջետային միջոցներն օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ: Բյուջետային միջոցների հատկացման ժամանակ օրենսդրության շրջանակներից դուրս ցանկացած գործողություն, որը հանգեցնում է բյուջեով նախատեսված միջոցների հասցեագրվածության խախտմանը կամ այդ միջոցների ուղղմանը բյուջեով չնախատեսված նպատակներին, որակ-

վում է որպես օրենսդրության խախտում («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ, 9-րդ մասեր):

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծությունը հանգեցնում է նրան, որ բոլոր բյուջեների մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման, տվյալ դեպքում՝ պետական բյուջեում, ընդ որում՝ բյուջետային միջոցներն օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար:

Ինչ վերաբերում է դրամագլխի միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունն ազգային մարմնին վերապահելուն, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ հաշվեքննության իրականացումը վերապահված է Հաշվեքննիչ պալատին (Սահմանադրության 198-րդ հոդված):

3. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, որպես կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներ, նախատեսվում է սահմանել պետական աջակցության պարտադիրությունն ու անընդհատությունը և կինոտարեգրության ստեղծման և ֆինանսավորման պարտադիրությունը:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանվում է, որ բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա պետական լիազորված մարմինը կազմում է հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը և ներկայացնում կառավարություն: Սա նշանակում է, որ ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով հարկաբյուջետային շրջանակը, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի առաջնահերթությունները, բյուջետային գործընթացի շրջանակներում որոշում է որևէ բյուջետային ծախսի ֆինանսավորման չափը տվյալ բյուջետային տարվա համար, իսկ նախորդ տարվա կոնկրետ ուղղությամբ միջոցների նախատեսումը չի ենթադրում և ինքնըստինքյան չի պայմանավորում հաջորդ տարիների համար դրա պարտադիրություն կամ անընդհատություն (բացառությամբ պարտադիր ծախսերի, օրինակ՝ աշխատավարձ, կենսաթոշակ և այլն): Այլ կերպ ասած՝ պետական բյուջեն ցանկացած դեպքում կազմվում է

բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա:

4. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առնվազն 100 միլիոն դրամ ներդրմամբ ֆիլմարտադրություն իրականացնելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր և ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները հավաստագրի հիման վրա ձեռք բերել մատակարարից դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով:

Այս առումով, հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մաս) քաղաքացիական հարաբերությունների կարգավորման հիմքում, ի թիվս այլնի, դրված է մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը:

Հավաստագրի հիման վրա մատակարարից ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու առաջարկն անհրաժեշտ ենք համարում քննարկել նաև ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված հիմնարար մոտեցումների համատեքստում: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության գործունեության հիմնարար ուղենիշ է հռչակվել մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսությունը: Կառավարությունը նպաստելու է այնպիսի միջավայրի կայացմանը, որտեղ աճ ստեղծելու և աճին մասնակցելու յուրաքանչյուր անհատի իրավունքը կլինի ոչ միայն պաշտպանված, այլև կխրախուսվի:

Տնտեսական բնագավառում պետությունը պարտավոր է ստեղծել պայմաններ համախառն ազգային արդյունքի ձևավորման գործում, տնտեսական գործունեության ոլորտում առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար: Տնտեսական, բիզնես դաշտը պետք է ձևավորվի ազատորեն, անաչառ մրցակցության՝ հովանավորչության բացառման պայմաններում: Համապատասխանաբար՝ կառավարության առաջիկա տնտեսական քաղաքականության հիմնական առանձնահատկությունը լինելու է ներառական տնտեսական աճի խթանումը:

Վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ ազատ շուկայական տնտեսավարման պայմաններում հավաստագրի հիման վրա մատակարարից ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու հնարավորության նախատեսումը խնդրահարույց է՝ հատկապես այն պարագայում, երբ նախագծի բովանդակությունից պարզ չէ, թե նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ծառայություն ձեռք բերելու պարագայում ծառայությունների մատուցման արդյունքում համապատասխան սուբյեկտի կրած վնասը կամ դրա փոխհատուցումն ինչ սկզբունքով և ում կողմից է իրականացվելու:

5. Այնուհանդերձ, օրենքի նախագծի վերբերյալ ներկայացվում են նաև հետևյալ դիտարկումները.

1) նախագծի 3-րդ հոդվածի՝

ա. 2-րդ մասով սահմանվում է «ազգային ֆիլմ» հասկացությունը, որը ուղղակի հղում է կատարում նախագծի 13-րդ հոդվածին՝ բնութագրելով այն բացառապես ստեղծագործական խմբի, այդ թվում՝ սցենարի հեղինակի և ռեժիսորի ՀՀ քաղաքացի լինելու պարտադիր պահանջով:

Ֆիլմի ազգային որակավորման համար կարևոր է նաև սահմանել ֆիլմի ազգային բովանդակության, ինչպես նաև ֆիլմի վերաբերյալ կինոքննադատների մասնագիտական կարծիքների կամ դրանց առկայության դեպքում թույլատրելի սահմանի անհրաժեշտությունը,

բ. 16-րդ մասով սահմանվում է «հավաստագիր» հասկացությունը, ըստ որի՝ վերջինս բնորոշվում է որպես «ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայություններ մատուցելու իրավունքը հաստատող փաստաթուղթ»:

Առաջարկում ենք հստակեցնել ֆիլմարտադրության ոլորտում հավաստագրման ենթակա ծառայությունների ցանկը:

Միաժամանակ, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է օրենքով սահմանվի պարտադիր վճար՝ պետական տուրք:

Անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև համապատասխան օրենքում՝ նշելով յուրաքանչյուր ծառայության հավաստագրման համար նախատեսվող պետական տուրքի չափը,

գ. 25-րդ կետի համաձայն՝ ֆիլմը ստեղծագործական խմբի համատեղ գործունեության արդյունքում ստեղծագործական մտահղացման հիմքի վրա ստեղծված, կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված և համապատասխան տեխնիկական միջոցներով հանրությանը ներկայացնելու համար նախատեսված տեսալսողական ստեղծագործությունն է:

Նշված սահմանումից հետևում է, որ ֆիլմ չեն համարվում համր ֆիլմերը, ինչպես նաև առանց թեմատիկ ամբողջականության միավորված ստեղծագործությունները: Միևնույն ժամանակ, հասկանալի չէ՝ արդյոք անիմացիոն ֆիլմերն օրենքի տեսանկյունից համարվում են ֆիլմ, թե ոչ: Այս առումով գտնում ենք, որ նախագծով առաջարկվող ֆիլմի սահմանումն անհրաժեշտ է խմբագրել,

դ. 26-րդ մասում «Ֆիլմի ցուցադրում» հասկացության մեջ ներառել նաև զանգվածային հաղորդակցության այլ տեխնիկական միջոցներով ֆիլմի ցուցադրումը, որն իր մեջ կներառի նաև համացանցի (ինստագրամ, ֆեյսբուք, թվիթեռ, յութուբ և այլն) հարթակները:

Միաժամանակ անհրաժեշտ է նախագծում սահմանել նաև համացանցի միջոցով ֆիլմի ցուցադրման հետ կապված վերահսկողության մեխանիզմները,

ե. 27-րդ մասով սահմանվում է «Ֆիլմարտադրող» հասկացությունը, որը ըստ սահմանման՝ «ստեղծագործական խմբի հետ կնքած պայմանագրերի հիման վրա ֆիլմի նկատմամբ բացառիկ գույքային իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտն է»:

Հայաստանի ճանաչելիությունը միջազգային շուկաներում բարձրացնելու և թիրախավորված մարքեթինգային արշավներ իրականացնելու նպատակով պետությունը որդեգրել է զբոսաշրջության, ինչպես նաև ներդրումների խթանման մարքեթինգային քայլեր, որոնք իրենց մեջ ներառում են, մասնավորապես՝ օտարերկրյա և տեղական հայտնի բլոգերների կողմից ճանաչողական այցերի կազմակերպում՝ երկրի մասին սիրողական մակարդակով ֆիլմերի նկարահանում մեծ թիրախային լսարանների համար: Նշված բլոգերները, ըստ նախագծի տրամաբանության, համարվում են ֆիլմ արտադրողներ, սակայն նրանք կարող են գործել առանձին՝ չունենալով ստեղծագործական խումբ և իրավաբանական անձի կարգավիճակ:

Անհրաժեշտ է նախագծում ներառել նաև վերոնշյալ դեպքի կարգավորման հետ կապված հարաբերությունները,

զ. 33-րդ մասով սահմանվում է «Ֆիլմի վարձույթ» հասկացությունը, որն ըստ նախագծի մեկնաբանության՝ ֆիլմի բնօրինակի կամ պատճենի սահմանափակ

ժամանակահատվածով օգտագործման տրամադրումն է: Միաժամանակ նախագծի 16-րդ հոդվածով սահմանվում է ֆիլմի վարձույթ իրականացնելու համար հավաստագրի պարտադիր պահանջ:

Ներկայումս շուկայում շատ են ֆիլմերի վարձույթի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները: Անհրաժեշտ է հստակեցնել նշված տնտեսավարող սուբյեկտների վրա նախագծով սահմանված ֆիլմի վարձույթի հավաստագրի պարտադիր պահանջի կիրառելիությունը. առաջարկում ենք հստակեցնել կամ սահմանել չափորոշիչ, թե ֆիլմի հրապարակային ցուցադրումից հետո քանի տարի հետո անձը կարող է առանց վարձույթի հավաստագրի իրականացնել ֆիլմի պատճենի վարձույթի գործունեություն:

Նախագծով սահմանվող ֆիլմի վարձույթի դրույթը պետք է վերաբերի միայն կինոոլորտին պատկանող գույքի օտարմանը կամ վարձակալությանը և տվյալ գույքը կարող է հանձնվել միայն կինոոլորտին առնչվող գործառույթներին:

Միաժամանակ, հասկացության մեջ «սահմանափակ ժամանակահատված» բառերը փոխարինել «Քաղաքացիական օրենսգրքի 630-րդ հոդվածով սահմանված ժամանակահատված բառերով»:

Նախագծի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով՝ «Վարձույթի հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են նաև Քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան:»:

2) Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համատեղ արտադրության ֆիլմն օգտվում է նույն օրենքի համաձայն ազգային ֆիլմին վերապահվող առավելություններից:

Այս առումով հայտնում ենք, որ անհասկանալի է, թե ազգային ֆիլմին վերապահվող ինչ առավելությունների մասին է խոսքը:

3) Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասով լիազոր մարմինը հաստատում է ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերի կազմն ու նվազագույն շահավետ գների հաշվարկման նորմատիվները, սակայն նախագծով կարգավորված չէ նորմատիվների մշակման և հաստատման մեթոդաբանությունը:

4) Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ մշակույթի ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին) հաստատում է ազգային մարմնի խորհրդի ընտրության կարգը:

Նախագծի 11-րդ հոդվածում սահմանված են դրույթներ ազգային մարմնի խորհրդի վերաբերյալ, այն է՝ ազգային մարմնի հոգաբարձուների խորհրդի անդամի ընտրության կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

5) Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ Կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված անդամություն չունեցող «Հայֆիլմ» ինստիտուտ անվանումով ոչ առևտրային կազմակերպություն է:

Այս առումով հաշվի առնելով ազգային մարմնի՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսանալու կարգավորումները՝ հոգաբարձուների խորհրդի ձևավորման առումով հարկ ենք համարում անդրադառնալ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի համապատասխան կարգավորումներին: Այսպես՝

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված պետական մարմինը՝ պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի ձևավորման և գործունեության կարգը, նրա լիազորությունները սահմանվում են պետական կազմակերպության կանոնադրությամբ:

Վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում, որ պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի, տվյալ դեպքում ազգային մարմնի խորհրդի ձևավորման և գործունեության կարգը կարող է սահմանվել կազմակերպության կանոնադրությամբ, հետևաբար տվյալ լիազորությունը լիազոր մարմնին վերապահելու մասով նախագծի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի դրույթներին:

Բացի այդ՝ նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիազորված պետական մարմինը հաստատում է գործադիր տնօրենի ընտրության կարգը:

Այս առումով նախագծի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների կարգավորումներին՝ պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ արդեն իսկ սահմանված է պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը: Ավելին՝ նույն որոշման 1-ին հավելվածի 12-

րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը սահմանում է մրցույթի անցկացման ընթացակարգը, մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը և կազմը:

6) Նախագծի 11-րդ հոդվածում ընդգրկված են հիմնավորումներ, ինչպիսիք են՝ «միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոն» (միջազգային են ինչպես Կաննի կինոփառատոնը, այնպես էլ Ամուրի կինոփառատոնը), «օտարերկրյա մասնագետ» և այլ հասկացություններ, որոնք շահարկումների և տարընթերցումների առիթ են ստեղծում:

Վերոգրյալի համատեքստում նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել:

7) Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «պահանջը» բառն անհրաժեշտ է փոխարինել «պայմանները» բառով՝ նկատի ունենալով նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

8) Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համատեղ արտադրություն է համարվում այն ֆիլմարտադրությունը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր պայմաններին՝ առկա է մասնակցության առավելագույն մաս ներկայացնող ֆիլմարտադրող, որն ունի ստեղծագործական ու տեխնիկական փաստացի մասնակցություն ֆիլմարտադրության մեջ և բավարարում է այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են որպեսզի համատեղ արտադրության ֆիլմը համարվի ազգային ֆիլմ, առկա է մասնակցության նվազագույն մաս ներկայացնող մեկ կամ մի քանի ֆիլմարտադրող:

Այս առումով հնարավոր չարաշահումներից և տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար՝ առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվելու մասնակցության՝ առավելագույն կամ նվազագույն մասի առկայությունը:

9) Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե ֆիլմի առանձին հատվածների հայերեն կրկնօրինակման կամ հստակ և տեսանելի ենթագրման բացակայությունը որ տեսանկյունից (չափանիշով) պետք է լինի ոչ էական, որպեսզի չխոչընդոտի վարձույթի վկայական տրամադրելուն:

10) Նախագծի 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածներով, որպես հավաստագրի տրամադրման հայտի, համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման հայտի և վարձույթի վկայականի մերժման հիմք, նախատեսվում է ներկայացված համապատասխան տեղեկությունների արժանահավատ չլինելը:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրա-

ռումը: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ քննարկվող իրավիճակում արժանահավատ չլինելու հիմքի նախատեսումը կրում է խիստ գնահատողական բնույթ և ենթադրում է չարդարացված լայն հայեցողության կիրառման հնարավորություն:

11) Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում օգտագործված «արժանահավատ չէ» ձևակերպումը հավաստագիր տրամադրողի համար կամայականության լայն «դաշտ» է ստեղծում: Առնվազն անհրաժեշտ է հստակեցնել, թե նույն հոդվածի 1-ին մասում թվարկված ներկայացվող տվյալներից որոնց արժանահավատությունն է գնահատվելու: Բացի այդ, պարզ չէ, թե ինչպես են հարաբերվում հոդվածի 2-րդ մասում գործածված «արժանահավատ չէ» և 3-րդ մասում գործածված «ոչ հավաստի տեղեկատվություն» հասկացությունները, ուստի դրանք պետք է դիտարկել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերին:

Նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերն անհրաժեշտ է խմբագրել՝ հստակեցնելով, որ տվյալ խախտումներն ի հայտ են եկել հավաստագրի տրամադրման հայտը հաստատելուց հետո:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ և նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին:

12) Նախագծի 24-րդ հոդվածում և 22-րդ հոդվածի որոշ դրույթներում ներառված են դրույթներ, որոնք բացառապես պետք է վերապահված լինեն ազգային մարմնի կանոնակարգային և կանոնադրական գործառույթներին և որևէ կերպ չպետք է հանդիսանան օրենքով կարգավորելու առարկաներ, քանի որ դրանք օպերատիվ կառավարման, կինոարտադրության առանձնահատկություններից բխող սկզբունքներ են և ենթակա են փոփոխությունների՝ ըստ անհրաժեշտության և զարգացումների:

13) «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի նախագծում նպատակային է ընդգրկել նաև ֆիլմհանձնակատարի գրասենյակի վերաբերյալ դրույթները, որոնք ֆիլմարտադրողների խնդիրները կարգավորում են մեկ պատուհանի սկզբունքով:

6. Նախագծի 21-րդ հոդվածով, որպես կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության ուղղություններ, առաջարկվում է մի շարք հարկային արտոնությունների տրամադրում: Այդ կապակցությամբ հայտնել ենք հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկային հարաբերությունները հարկ վճարողների հաշվառման, սպասարկման, հարկերի ու վճարների սահմանման, հաշվարկման, վճարման, հարկային պարտավորությունների հաշվառման, իսկ օրենսգրքով սահմանված դեպքերում՝ գանձման, հարկերի ու վճարների վերադարձման, հարկային արտոնությունների սահմանման, հարկ վճարողների, հարկային և լիազոր մարմինների լիազորությունների ու պարտականությունների ամրագրման, հարկային հսկողության իրականացման, օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև հարկային վեճերի լուծման հետ կապված հարաբերություններն են:

Բացի այդ, օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, օրենսգրքով, վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասի 1-6-րդ կետերում նշված իրավական ակտերով:

Այս առումով հայտնել ենք, որ «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքով չեն կարող կարգավորվել հարկային հարաբերություններ, և առաջարկել ենք նախագծից հանել հարկային արտոնություններին վերաբերող դրույթները:

Միաժամանակ նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվում է սահմանել, որ ֆիլմարտադրության և կինոարվեստի միջոցառումների շրջանակներում ապրանքների ժամանակավոր ներմուծման ու արտահանման դեպքում գործում է հայտարարագրման պարզեցված կարգ և սահմանվում է հայտարարագրի ընդունման պահից չորս ժամվա ընթացքում ապրանքների բացթողնման ժամկետ՝ առանց մաքսային վճարների վճարման:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ապրանքների բացթողնման ժամկետները սահմանված են ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 119-րդ հոդվածով: Մասնավորապես՝ սահմանված է, որ ապրանքների բաց թողնումը պետք է ավարտվի մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման պահից 4 ժամվա ընթացքում, իսկ եթե ապրանքների հայտարարագիրը գրանցվել է ավելի ուշ, քան մաքսային մարմնի

աշխատանքային ժամի ավարտին նախորդող 4 ժամը, ապա այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամը սկսվելու պահից 4 ժամվա ընթացքում՝ բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի: Բացառությունները վերաբերում են մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելու, այդ տեղեկություններում փոփոխություններ և ճշգրտումներ կատարելու դեպքերին:

Բացի այդ՝ հարկ է նշել նաև, որ նախագծով սահմանվող դրույթն իր էությամբ նախագծի կարգավորման առարկա չէ, քանի որ վերաբերում է մաքսային կարգավորման ոլորտին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում ենք «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածից հանել հարկային արտոնություններին և մաքսային հարաբերություններին վերաբերող կարգավորումները:

7. Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունը հաստատում է ֆիլմարտադրության նպատակով ՀՀ ժամանող անձանց առանց մուտքի վիզայի ՀՀ տարածքում գտնվելու և առանց աշխատանքի թույլտվության ֆիլմարտադրությանը մասնակցելու կարգը:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումները, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոխադարձության սկզբունքի հիման վրա կամ անհրաժեշտության դեպքում նաև միակողմանիորեն որոշ պետությունների քաղաքացիների համար կարող է սահմանել առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ կամ որոշակի կատեգորիայի անձանց կարող է ազատել մուտքի վիզա ձեռք բերելու պահանջից:

Ընդ որում՝ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու դիմումի քննարկման կարգը, դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը և խմբակային մուտքի վիզաների տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր առանձին դեպքում հիշյալ հոդվածի 5-րդ մասում նախատեսված պայմաններում կարող է ընդունել որոշում՝ որոշակի քաղաքացիների համար առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ սահմանելու մասին, հետևաբար այս առումով անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել ՀՀ կառավարության կողմից ֆիլմարտադրության նպատակով ՀՀ ժամանող անձանց մուտքի

վիզա ձեռք բերելու պահանջից ազատելու կարգը հաստատելու լիազորությունը:

Անդրադառնալով ՀՀ կառավարության կողմից առանց աշխատանքի թույլտվության ֆիլմարտադրությանը մասնակցելու կարգը հաստատելու լիազորությանը՝ հարկ ենք համարում նկատի ունենալ, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 23-րդ հոդվածով նախատեսվել են աշխատանքի թույլտվության բացառությունները՝ հստակ նշելով այն սուբյեկտների շրջանակը, որոնք առանց աշխատանքի թույլտվության կարող են աշխատել Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես՝ հիշյալ հոդվածի 1-ին մասի «ժե» կետի համաձայն՝ առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ առանձին մասնագիտություններով բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետները:

Ավելին՝ օրենքի հիշյալ դրույթի հիման վրա ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի N 493-Ն որոշմամբ արդեն իսկ սահմանվել է բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկը: Մասնավորապես՝ հիշյալ որոշմամբ նախատեսվել է, որ առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված՝ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում ներառված հետևյալ մասնագիտություններ ունեցող օտարերկրացիները՝

ա. «0612 Տվյալների բազաների և տեղեկատվական ցանցերի ստեղծում և կառավարում»,

բ. «0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում»,

գ. «0811.01.5 Գյուղատնտեսագիտություն» մասնագիտությամբ «0811.01.01.5 Գյուղատնտես» որակավորումը, «0811.02.5 Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ «0811.02.01.5 Ֆերմեր» որակավորումը, «0811.03.5 Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությամբ «0811.03.01.5 Տեխնիկ-ագրոնոմ» որակավորումը.

2) գիտական աստիճան ունեցող օտարերկրացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն

մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում ներառված հետևյալ մասնագիտություններ ունեցող օտարերկրացիները՝

ա. «0611 Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»,

բ. «0412 Ֆինանսներ»,

գ. «0413 Կառավարում և վարչարարություն»,

դ. «0619 Համակարգչային անվտանգություն»,

ե. «0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում»,

զ. «0721 Պարենամթերքի տեխնոլոգիա»:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է դիտարկել «Օտարերկրացիների մասին» օրենքի և վկայակոչված կառավարության որոշման կարգավորումների համատեքստում:

Լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նաև նախագծի նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ֆիլմաարտադրության և ֆիլմի ցուցադրման նպատակով ժամանակավոր ներմուծվող և արտահանվող ապրանքների ցանկը, որոնց համար սահմանվում է հայտարարագրման պարզեցված կարգ և մինչև 4 ժամվա ընթացքում բացթողնման ժամկետ հաստատելու ՀՀ կառավարության լիազորության նախատեսումը:

8. Միաժամանակ հարկ է նշել, որ նախագծի վերաբերյալ առկա են նաև հետևյալ տեխնիկական բնույթի դիտողություններ.

ա) նախագծի 1-ին հոդվածում «օրենքը սահմանում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով սահմանվում են» բառերով, իսկ «կարգավորում է» բառերը՝ «կարգավորվում են» բառերով. միաժամանակ նախագծի 1-ին հոդվածում «ոլորտի» բառն առաջարկում ենք փոխարինել «ոլորտում» բառով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև նախագծի ողջ տեքստում.

բ) նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետում «տրամադրում» բառն առաջարկում ենք փոխարինել «հանձնում» բառով՝ նկատի ունենալով Քաղաքացիական օրենսգրքի դրույթները.

գ) նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասում «որի՝» բառն անհրաժեշտ է փոխարինել «ում՝» բառով.

դ) նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ օրենքի մասին է խոսքը. նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասին.

ե) նախագծի 21-րդ հոդվածում անհրաժեշտ է շտկել պարբերությունների համարակալումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթները.

զ) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.25-րդ, 189.26-րդ և 189.27-րդ հոդվածներով».

է) նախագծի 4-րդ հոդվածում «կետը» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասը» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, այն է՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1) նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներով նշված են «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքից բխող դրույթների պահանջների խախտման վերաբերյալ տուգանքների հոդվածները և այդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը ըստ նախագծի 4-րդ հոդվածի՝ քննում են վարչական դատարանները՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հայցադիմումով: Նախագծով առաջարկվող փոփոխությամբ նշված չէ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի պահանջները խախտելու դեպքում գործերը քննող և արձանագրություն կազմող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը: Հայտնում ենք նաև, որ հեռուստաընկերությունների կողմից հեռուստատեսության և ռադիոյի օրենսդրության պահանջները խախտելու համար պատասխանատվությունը սահմանվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով.

2) նախագծում անհրաժեշտ է պատասխանատվություն նախատեսել նաև «Կինոմատոգրաֆիայի մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասով

նախատեսված պարտականության չկատարման համար՝ նկատի ունենալով «Կինոմատոգրաֆիայի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը:

3. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1) նախագծով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ հայտնում ենք, որ լայնածավալ հարկային արտոնությունների կապակցությամբ որևէ հիմնավորում ներկայացված չէ, բացառությամբ թերևս նրա, որ ուսումնասիրվել է մի շարք երկրների հարկային արտոնությունների փորձը (որի մասին, ի դեպ, հիմնավորմամբ որևէ տեղեկատվություն ներկայացված չէ): Նշյալ մոտեցումն առհասարակ ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է հարկային լայնածավալ արտոնություններին, որոնք բացի նրանից, որ պետք է հիմնավորված լինեն տնտեսագիտորեն և առհասարակ որևէ հարկի կիրառության տրամաբանության տեսանկյունից, այլ նաև անպայմանորեն պետք է հիմնավորված լինեն կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության և մասնավորապես՝ հարկային քաղաքականության նպատակադրումների տեսանկյունից: Անհասկանալի է, թե հեռուստատեսությամբ ֆիլմերի ցուցադրության ընթացքում ցուցադրվող գովազդից ստացվող եկամուտների (իրացման շրջանառությունների) մասով հարկային արտոնությունների բացակայությունը ինչով է խոչընդոտում ֆիլմարտադրության զարգացմանը, և ինչով կարող է ֆիլմի՝ ընդամենը ցուցադրության գործընթացին մասնակից տնտեսավարող սուբյեկտների եկամուտների հարկումը խոչընդոտել ֆիլմարտադրության զարգացմանը:

2) ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության նպատակադրումների առնչությամբ պետք է ընդգծել, որ նոր հարկային արտոնությունների սահմանումը չի բխում ՀՀ կառավարության կողմից ներկայումս իրականացվող հարկային քաղաքականության ուղղություններից, քանի որ ներկա փուլում իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է հարկման բազաների ընդլայնմանը և հարկաբյուջետային կայունության ամրապնդմանը: Այլ կերպ ասած՝ ներկա փուլում խնդիր է դրված ոչ միայն ձեռնպահ մնալ նոր հարկային արտոնությունների տրամադրումից, այլ նաև կիրառությունից հանել բոլոր այն հարկային արտոնությունները, որոնց կիրառությունը չի հիմնավորվում ծախսեր/օգուտներ հարաբերակցության տեսանկյունից: Այդ կապակցությամբ քաղաքականության նշյալ ուղղությունն իր արտացոլումն է գտել ՀՀ կառավարության կողմից հաստատված մի քանի ռազմավարական փաստաթղթերում (Պետական ֆինանսների

կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարություն, Հարկային բարեփոխումների հայեցակարգ)։

Ավելին՝ ՀՀ վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հարկային քաղաքականության ճեղքի կրճատմանն ուղղված միջոցառումները հաստատելու մասին» N 1455-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ հարկային ճեղքի կրճատմանն ուղղված միջոցառումների 1-ին կետով որպես միջոցառում սահմանված է ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունների կրճատման նպատակով ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի մշակում և կառավարության քննարկմանը ներկայացում։

3) Առաջարկվող հարկային արտոնությունների սահմանումը արդարացված չէ հարկման հավասարության և արդարության սկզբունքների տեսանկյունից։ Մասնավորապես՝ անհասկանալի է, թե ինչու կինոարտադրության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների հարկային պարտավորությունները պետք է հաշվարկվեն ավելի արտոնյալ պայմաններում, իսկ այլ մշակութային միջոցառումներ, ինչպիսիք են՝ թատերական ներկայացումները կամ պետական նվագախմբերի կողմից տրվող համերգները կամ սոցիալական այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են՝ հացը կամ դեղը, շարունակեն հարկվել ընդհանուր սահմանված կանոնների ներքո։

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նկատել նաև, որ որևէ ոլորտի համար նոր հարկային արտոնությունների սահմանման արդյունքում մյուս ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների մոտ մշտապես ձևավորվում են նման արտոնություններից օգտվելու պահանջներ և սպասումներ, ինչն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում հարկ վճարողների հարկային կարգապահության ընդհանուր մակարդակի վրա։

4) Առաջարկվող հարկային արտոնությունների սահմանումը հիմնավորված չէ նաև հարկումից խուսափելու ռիսկերը նվազեցնելու և իրականացվող հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյուններից, քանի որ օրենսդրության կիրառության փորձը ցույց է տալիս, որ ցանկացած նոր հարկային արտոնության սահմանում մշտապես ուղեկցվում է հարկումից խուսափելու և չարաշահումների ռիսկերի ավելացմամբ։ Միաժամանակ այդ ռիսկերը կառավարելուն ուղղված վարչարարական լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը նվազեցնում է հարկային վարչարարության արդյունավետությունը։ Այս առումով հարկային արտոնությունները որպես պետական աջակցության գործիքներ չունեն բավարար հասցեականություն, հետևաբար ծախսերի ու օգուտների համադրմամբ դրանց արդյունավետությունը չի հիմնավորվում այն

առումով, որ հարկային արտոնության տրամադրման արդյունքում պետության կորցրած հարկային եկամուտները շատ ավելի մեծ են, քան արտոնության իրական շահառուների օգուտները կարող են լինել:

5) Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ ցանկացած հարկային արտոնության տրամադրում ենթադրում է հարկային եկամուտների կորուստ, հետևաբար նաև՝ մշակութային, առողջապահական, սոցիալական, կրթական, բնապահպանական և այլ հանրօգուտ ոլորտներում չկատարված բյուջետային ծախսեր: Մյուս կողմից՝ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ պետության ծախսային քաղաքականության շրջանակներում պետական աջակցության բյուջետային գործիքակազմն ավելի հասցեական ու, հետևաբար, նաև ավելի արդյունավետ է՝ ակնհայտ է դառնում, որ հարկային արտոնությունների տրամադրումը պետական աջակցության լավագույն միջոցը չէ, քանի որ հարկային արտոնությունը, դրա իրական հասցեատերերի համար որոշակի կոնկրետ արդյունք չերաշխավորելով հանդերձ, հանգեցնում է հարկային ծախսերի առաջացման՝ պետությանը զրկելով աջակցության ավելի հասցեական ծրագրեր իրականացնելու հնարավորությունից:

6) Միևնույն ժամանակ նախագծով ներկայացված հարկային արտոնությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ արտոնությունների մի մեծ հատված վերաբերում է ֆիլմերի ցուցադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին: Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ հասկանալի չեն հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից և կինոթատրոնում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացվող եկամուտները շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չհամարելու առաջարկության նպատակադրումները, քանի որ կրկին խոսքը ֆիլմի ցուցադրության և ոչ թե ֆիլմի արտադրության գործունեությանն է վերաբերում: Մյուս կողմից՝ եթե առաջարկության նպատակն այն է, որ ֆիլմ ցուցադրող ընկերություններն ունենան ֆինանսական ռեսուրսներ՝ ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին մասհանումներ կատարելու համար, ապա այդ նպատակով հարկային արտոնությունների սահմանումը նշանակում է, որ դրամագլխում գումարներ կուտակելու համար հարկային արտոնության տեսքով կրկին վճարում է պետությունը, և հաշվի առնելով հարկային արտոնությունների կիրառության ընթացքում ի հայտ եկող բազամաթիվ խնդիրները՝ հայտնում ենք, որ աջակցության նման գործիքի կիրառությունը նպատակահարմար համարվել չի կարող, և ավելի նպատակահարմար է հարցը քննարկել բյուջետային աջակցության գործիքակազմի շրջանակում՝ առանց լրացուցիչ հարկային արտոնություններ սահմանելու:

7) Լրացուցիչ քննարկման և հիմնավորման կարիք ունի կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման նպատակով ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխից և պետական բյուջեից տրամադրվող գումարները շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չհամարելու առաջարկությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը շահութահարկի մասին է, և դժվար է պնդել, որ կինեմատոգրաֆիայի ոլորտի ընկերություն-ների մոտ շահութահարկի գծով առաջացող պարտավորություններն արդյունք են հենց այդ եկամուտների: Ավելին՝ կարելի է ենթադրել, որ դրամագլխից և պետական բյուջեից տրա-մադրվող այդ գումարներն ունենալու են ծախսման նախապես որոշված ուղղություններ, հետևաբար մշտապես ուղեկցվելու են ծախսերով, ինչը նշանակում է, որ կինոմատոգրաֆիայի ոլորտի ընկերությունների մոտ խնդրո առարկա եկամուտներից հավանաբար շահութահարկի գծով պարտավորություններ չեն առաջանալու: Մյուս կողմից՝ եթե ինչ-ինչ պատճառներով նշյալ եկամուտները չեն ուղեկցվելու ծախսերով և առաջացնելու են շահութահարկի գծով պարտավորություններ, ապա այդ պարտավորություններից ազատելու նպատակադրումները հիմնավորված համարվել չեն կարող, քանի որ ի վերջո խոսքը շահութահարկի գումարի մասին է, և անհասկանալի է, թե ինչու, օրինակ՝ պետական բյուջեից մյուս ոլորտների զարգացմանն ուղղվող աջակցության գումարների հաշվին ոլորտի ընկերությունների մոտ գոյացող շահույթը պետք է ծանրա-բեռնվի շահութահարկով, իսկ կինեմատոգրաֆիայի ոլորտին աջակցությանն ուղղվող գումարները՝ ոչ:

8) Խորքային հիմնավորման կարիք ունի ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին կատարվող մասհանումներն ամբողջությամբ շահութահարկ վճարողների համախառն եկամտից նվազեցնելու առաջարկությունը, քանի որ հասկանալի չէ, թե ինչու, օրինակ՝ գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշեր-օթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին շահութա-հարկ վճարողների կողմից տրամադրվող դրամական միջոցները համախառն եկամտից պետք է նվազեցվեն համախառն եկամտի 0.25 տոկոսի չափով, իսկ ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին կատարվող մասհանումները՝ ամբողջությամբ: Մյուս կողմից՝ նման առաջարկությունը պարունակում է հարկումից խուսափելու լրջագույն ռիսկեր, որոնք անտեսվել չեն կարող: Նկատենք նաև, որ նախագծերի փաթեթով ներկայացված առաջար-կությունների համաձայն՝ ազգային ֆիլմ է համարվելու ոչ թե այն ֆիլմը, որն ուղղված է ազգային արժեքների տարածմանը և զարգացմանը, այլ այն ֆիլմը, որը արտադրվել է ՀՀ

քաղաքացիություն ունեցող բեմադրողի կողմից և որի արտադրությանը մասնակցել են մեծամասամբ ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք:

9) Ռեզիդենտ առևտրային կազմակերպությանն օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում կառավարության որոշմամբ սահմանված զեղչ սակագնով կամ անվճար ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտները շահութահարկ վճարողի շահութահարկի գումարից նվազեցվող գումար համարելու առաջարկության կապակցությամբ հայտնում ենք, որ հավանաբար նման առաջարկությունը պայմանավորված է նախագծերի փաթեթում ներառված՝ «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված այն կարգավորմամբ, համաձայն որի ՀՀ տարածքում առնվազն 100 մլն դրամ ներդրմամբ ֆիլմարտադրություն իրականացնելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր և դրա հիման վրա ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները ձեռք բերել նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ նշյալ առաջարկությունը, ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ է քննարկել նախևառաջ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու տեսանկյունից, քանի որ նշյալ դրույթն, ըստ էության, նշանակում է, որ ֆիլմարտադրությամբ զբաղվող ընկերությունների մատակարարները ծառայություններ մատուցելուց պետք է հրաժարվեն իրենց շահույթից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կրկին հայտնում ենք, որ նախագծերի փաթեթում ներառված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը սկզբունքորեն անընդունելի է:

Այսպիսով ամփոփելով նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծերի փաթեթը ներկայացված տեսքով ընդունելի չէ, և այն հիմնովին լրամշակման կարիք ունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կինեմատոգրաֆիայի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-910-26.03.2021-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-910-26.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքի նպատակն է ապահովել կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, ստեղծել բավարար իրավական երաշխիքներ եւ աջակցել ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանը, ցուցադրմանն ու առաջխաղացմանը, ինչպես նաեւ կինոժառանգության եւ կինոտարեգրության պահպանմանն ու հասանելիության ապահովմանը:

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները, պետական աջակցության նպատակներն ու ձեւերը, պետական եւ այլ մարմինների լիազորությունները, կարգավորում է կինեմատոգրաֆիական գործունեության իրավական, կազմակերպական եւ ֆինանսական հարաբերությունները:

Հոդված 2. Կինեմատոգրաֆիայի մասին օրենսդրությունը

1. Կինեմատոգրաֆիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ միջազգային պայմանագրեր), սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով (այսուհետ՝ օրենք) եւ սույն օրենքին համապատասխան ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Եթե միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ազգային կինոռեեստր՝ ազգային ֆիլմերի վիճակագրական հաշվառումը կազմակերպելու նպատակով ստեղծված տվյալների հիմնապահոց.

2) ազգային ֆիլմ՝ կինոթատրոնում ցուցադրելու համար նախատեսված եւ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված պայմանները բավարարող ֆիլմ.

3) աջակցություն տրամադրող՝ ֆիլմերի ստեղծման եւ տարածման համար ֆինանսավորում հատկացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով չի մասնակցում ֆիլմարտադրության գործընթացին, ձեռք չի բերում ֆիլմի նկատմամբ գույքային իրավունքներ եւ չի կարող ազդել ֆիլմարտադրողի որոշումների կայացման վրա.

4) դասակարգում՝ ֆիլմի տարբերակում՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակման չափորոշիչների.

5) դրամագլուխ՝ ազգային ֆիլմերի աջակցության նպատակով կատարվող հատկացումների հաշվին ձեւավորվող դրամական միջոց.

6) ենթագրում՝ ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի կամ մեկնաբանություն պարունակող տեքստի արտածում կադրում.

7) լիամետրաժ ֆիլմ՝ 52 րոպե եւ ավելի տեւողություն ունեցող ֆիլմ.

8) կարճամետրաժ ֆիլմ՝ մինչեւ 52 րոպե տեւողություն ունեցող ֆիլմ.

9) կինեմատոգրաֆիա՝ մշակույթի եւ արվեստի ոլորտ, որն իր մեջ ներառում է ֆիլմի ստեղծման, տարածման, ցուցադրման հետ կապված մասնագիտական, ստեղծագործական, արտադրական, տեխնիկական, գիտական եւ կրթական գործունեության ամբողջություն.

10) կինոթատրոն՝ համապատասխան տեխնիկական միջոցներով էկրանի վրա 50 եւ ավելի դիտողների համար ֆիլմի ցուցադրման մեկ կամ ավելի սրահ ունեցող վայր.

11) կինոժառանգություն՝ ժառանգված, պահպանված, հաջորդ սերունդներին փոխանցվող եւ հանրային սեփականություն հանդիսացող ֆիլմի հիմնանյութ, ֆիլմի բնօրինակ կամ դրա պատճեն, ֆիլմի ստեղծման համար անհրաժեշտ պարագաներ (բեմադրական իր, կահույք, հագուստ, սարք, սարքավորում, առարկա, կառույց), շարժական եւ անշարժ գույք.

12) կինոտարեգրություն՝ փաստավավերագրական նյութ, որում ժամանակագրական կարգով արտացոլված է իրողությունների կամ փաստերի հաջորդական պատկերում՝ դրանք հետագայում օգտագործելու նպատակով.

13) կինոփառատոն՝ մեկ եւ ավելի անվանակարգերում ընտրված ֆիլմերի ցուցադրման նպատակով մրցութային կամ ոչ մրցութային ծրագրով եւ հաստատված կանոնակարգով անցկացվող միջոցառում.

14) կրկնօրինակում՝ ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի վանկավոր արտասանության համաժամանակյա թարգմանության հնչյունագրում.

15) համատեղ արտադրություն՝ օտարերկրյա եւ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրողների կողմից համատեղ իրականացվող եւ սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պայմանները բավարարող ֆիլմարտադրություն.

16) հավաստագիր՝ ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

17) ձայնային ներկայացում՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ֆիլմի դրվագների հակիրճ բանավոր նկարագրություն.

18) մատակարար՝ ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսվարող սուբյեկտ.

19) նվազագույն շահավետ գին՝ տնտեսապես հիմնավորված նվազագույն գին, որով պետության գնային կարգավորման բացակայության դեպքում մատակարարի կողմից կմատուցվեր ծառայությունը.

20) շահառու՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսվարող սուբյեկտ, որին կարող է հատկացվել ֆինանսավորում՝ սույն օրենքի համաձայն.

21) ստեղծագործական խումբ՝ ֆիլմի ստեղծման մեջ ներգրավված աշխատախումբ, այդ թվում՝ սցենարի հեղինակ, բեմադրող կամ գլխավոր ռեժիսոր, պրոդյուսեր, բեմադրող կամ գլխավոր օպերատոր, բեմադրող կամ գլխավոր նկարիչ, երաժշտության հեղինակ, հնչյունային ռեժիսոր, մոնտաժի ռեժիսոր, մոնտաժող, անիմատոր, զգեստների նկարիչ, նկարիչ, դիմահարդար, առաջին, երկրորդ եւ երրորդ դերի դերասաններ.

22) վարձույթ իրականացնող (դիստրիբյուտոր)՝ ֆիլմի վարձույթը կազմակերպող տնտեսվարող սուբյեկտ.

23) վարձույթի վկայական՝ ֆիլմի վարձույթի իրավունքը հաստատող փաստաթուղթ.

24) տնտեսվարող սուբյեկտ՝ կինեմատոգրաֆիայի ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

25) ֆիլմ՝ ստեղծագործական խմբի համատեղ գործունեության արդյունքում ստեղծագործական մտահղացման հիմքի վրա ստեղծված, կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված եւ համապատասխան տեխնիկական միջոցներով հանրությանը ներկայացնելու համար նախատեսված տեսալսողական ստեղծագործություն.

26) ֆիլմ ցուցադրող՝ ֆիլմի ցուցադրումը կազմակերպող տնտեսվարող սուբյեկտ.

27) ֆիլմարտադրող՝ ստեղծագործական խմբի հետ կնքված պայմանագրերի հիման վրա ֆիլմի նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներ ձեռք բերող տնտեսվարող սուբյեկտ, ով նախաձեռնում է ֆիլմարտադրությունը եւ պատասխանատվությունը կրում դրա համար.

28) ֆիլմարտադրություն՝ ֆիլմ ստեղծելու նպատակով ֆիլմարտադրողների կողմից իրականացվող գործունեություն՝ ստեղծագործական խմբի ներգրավմամբ, տեխնիկական եւ այլ միջոցների օգտագործմամբ.

29) ֆիլմի բնօրինակ՝ որակական չափանիշներով ֆիլմի հիմնանյութի ձեւաչափին համապատասխանող ֆիլմի վերջնական հաստատված տարբերակի առաջին օրինակ.

30) ֆիլմի հիմնանյութ՝ նեգատիվ, հակատիպ, վերստուգիչ պատճեն, տեսահնչյունագրի, երաժշտության, ձայնային համադրման ու մագնիսային հնչյունագրերի բնօրինակ եւ նյութական կրիչի վրա պահվող ու ֆիլմի պահպանման եւ վերարտադրման համար անհրաժեշտ այլ նյութեր.

31) ֆիլմի նախագիծ՝ ֆիլմի ստեղծման վերաբերյալ փաստաթղթերի ամբողջություն, որի հիման վրա ընդունվում է ֆիլմարտադրության կամ դրա ֆինանսավորման մասին որոշում.

32) ֆիլմի պահպանություն՝ ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ դրա պատճենի եւ ֆիլմի նախագծի երկարաժամկետ պահպանմանը, պահպանվածության ապահովմանն ու վերականգնմանն ուղղված գործունեություն.

33) ֆիլմի վարձույթ՝ ֆիլմի բնօրինակի, դրա պատճենի կամ օրինակների սահմանափակ ժամանակահատվածով օգտագործման տրամադրում.

34) ֆիլմի ցուցադրում՝ ֆիլմի հրապարակային ցուցադրում կինոթատրոնում, հեռարձակում հաղորդալարով (ներառյալ՝ մալուխային կապը) կամ առանց հաղորդալարի (ներառյալ՝ հեռուստատեսային կամ արբանյակային կապը):

Հոդված 4. Կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության սկզբունքները

1. Կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) ստեղծագործողների ազատության երաշխավորումը.

2) պետական աջակցության պարտադիրությունն ու անընդհատությունը.

3) պետական աջակցության թափանցիկությունը

4) իրավական դաշտի կատարելագործումը եւ շահերի բախման կառավարելիությունը.

5) բարենպաստ հարկային քաղաքականության ապահովումը.

6) կինոարվեստի պահպանումը, տարածումն ու զարգացումը.

7) ազգային ֆիլմերի ստեղծման եւ հանրահռչակման առաջնահերթությունը.

8) կինոտարեգրության ստեղծման եւ ֆինանսավորման պարտադիրությունը.

9) հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանությունը:

Հոդված 5. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն ու ձեւերը

1. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն են՝

1) կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումը.

2) ազգային ֆիլմերի ստեղծումը, տարածումն ու պահպանությունը.

3) կրթական, գիտական եւ տեղեկատվական համակարգերի զարգացումը.

4) համատեղ արտադրության խթանումը.

5) կինոժառանգության եւ կինոտարեգրության պահպանումը.

6) օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության ձեւերն են՝

1) ներդրումների իրականացումը եւ երաշխիքների տրամադրումը.

2) աջակցող ենթակառուցվածքների ստեղծումը եւ զարգացումը.

3) արտադրական եւ տեխնիկական անհրաժեշտ պայմանների ապահովումը.

4) կինոարվեստին հաղորդակցվելու մատչելի պայմանների ստեղծումը.

5) ֆինանսավորման բարենպաստ պայմանների ապահովումը.

6) ֆիլմերի ստեղծման, տարածման եւ պահպանման ֆինանսավորումը.

7) կինոփառատոների եւ կինոարվեստի այլ միջոցառումների կազմակերպումը.

8) կինոարվեստի միջոցառումներին մասնակցության ապահովումը.

9) օրենքով չարգելված այլ աջակցություն:

Հոդված 6. Կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական միջամտության բացառումը

1. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կինեմատոգրաֆիայի ոլորտում պետության կողմից ստեղծագործական գործընթացին միջամտելու բացառումը եւ երաշխավորում է ազատ ստեղծագործելու ու ինքնաարտահայտվելու հնարավորությունը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտում գրաքննությունն, այդ թվում՝ պետական աջակցության մեխանիզմների գործադրման միջոցով, արգելվում է:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն)՝

1) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այսուհետ՝ պետական բյուջե) միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտին ֆինանսավորում (այսուհետ՝ պետական ֆինանսավորում) տրամադրելու կարգը.

2) հաստատում է ֆիլմի առաձին կատեգորիաների պետական ֆինանսավորման մասնաբաժինները եւ սահմանաչափերը.

3) հաստատում է հավաստագրի եւ վարձույթի վկայականի տրամադրման եւ գործողության դադարեցման կարգը.

4) հաստատում է համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման եւ դադարեցման կարգը.

5) հաստատում է ֆիլմը դասակարգելու եւ դիտողներին տեղեկացնելու նպատակով ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը.

6) հաստատում է ֆիլմ ցուցադրողների կողմից տեղեկությունների տրամադրման եւ դրամագլխին հատկացումների կատարման կարգը.

7) հաստատում է ազգային կինոռեեստր ստեղծելու եւ վարելու կարգը.

8) իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 8. Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները

1. Մշակույթի ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին)՝

1) մշակում եւ իրականացնում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականությունը.

2) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերն ու հայեցակարգերը.

3) ապահովում է կինեմատոգրաֆիայի ոլորտի միջազգային համագործակցության զարգացումը.

4) ուսումնասիրում է հավաստագիր տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը եւ տրամադրում է հավաստագիր.

5) հաստատում է ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերի կազմն ու նվազագույն շահավետ գների հաշվարկման նորմատիվները.

6) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտին ֆինանսավորում հատկացնելու կանոնակարգը.

7) հաստատում է կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի (այսուհետ՝ ազգային մարմին) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) անդամների եւ ազգային մարմնի գործադիր տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) ընտրության կարգը.

8) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտի մասնագետների (այսուհետ՝ մասնագետ) գնահատման չափանիշները.

9) իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 9. Ազգային մարմնի լիազորությունները

1. Ազգային մարմինն՝

1) ապահովում է կինոարվեստի ստեղծագործության բոլոր տեսակների զարգացումը.

2) ապահովում է շահերի բախման կառավարելիությունը.

3) ապահովում է ազգային ֆիլմերի վերականգնումն ու թվայնացումը.

4) ապահովում է ազգային կինոռեեստրի ստեղծումը եւ դրա հետագա վարումը.

5) ապահովում է կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման իրականացումը եւ հատկացված միջոցների նպատակային օգտագործման վերահսկումը.

6) ապահովում է համաշխարհային կինոժառանգության հասանելիությունը.

7) ապահովում է պայմաններ ոլորտի կրթական համակարգի զարգացման համար.

8) ապահովում է պայմաններ կադրերի պատրաստման եւ վերապատրաստման համար.

9) ապահովում է պայմաններ ստեղծագործական ներուժի վերարտադրման, իրացման եւ երիտասարդ ստեղծագործողների լիարժեք ինքնադրսեւորման համար.

10) ապահովում է պայմաններ փոքր եւ միջին ֆիլմարտադրողների կայացման համար.

11) ապահովում է պայմաններ հանրային տարածքներում ֆիլմի նկարահանումներն օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան իրականացնելու համար.

12) ապահովում է պայմաններ ֆիլմի դասակարգումը, կրկնօրինակումը, ենթագրումը եւ ձայնային ներկայացումն իրականացնելու համար.

13) ապահովում է պայմաններ ֆիլմերի ցուցադրման ցանցի ստեղծման համար.

14) ապահովում է պայմաններ համատեղ արտադրության զարգացման համար.

15) ապահովում է պայմաններ կինեմատոգրաֆիայի ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության համար.

16) աջակցում է ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանը եւ առաջխաղացմանը.

17) Աջակցում է դեբյուտային եւ մանկապատանեկան ֆիլմերի ստեղծմանը.

18) աջակցում է կինոարվեստի միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցությանը.

19) ուսումնասիրում է հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների մասին տեղեկությունները.

20) ուսումնասիրում է համատեղ արտադրության կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերը եւ տրամադրում համատեղ արտադրության կարգավիճակ.

21) ուսումնասիրում է վարձույթի վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերը եւ տրամադրում վարձույթի վկայական.

22) իրականացնում է օրենքով եւ իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ 3

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ՏՆՕՐԵՆԸ

Հոդված 10. Ազգային մարմինը

1. Ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայֆիլմ» ինստիտուտ անվանումով մշակութային հիմնադրամ է, որն ունի բացառիկ լիազորություններ պետական բյուջեի եւ դրամագլխի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն իրականացնելու նպատակով մրցույթների (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման եւ անցկացման գործում:

2. Ազգային մարմինը հանդիսանում է աջակցություն տրամադրող եւ չի կարող ձեռք բերել գույքային իրավունքներ իր կողմից կամ իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ:

3. Ազգային մարմինը չի հանդիսանում ֆիլմարտադրող եւ չի կարող իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսվարող սուբյեկտի միջոցով, որում ունի բաժնեմասնակցություն կամ հնարավորություն կանխորոշելու վերջինիս կառավարման մարմինների որոշումները կամ էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա:

Հոդված 11. Ազգային մարմնի խորհուրդը

1. Ազգային մարմնի կառավարման բարձրագույն մարմինը յոթ անդամից բաղկացած խորհուրդն է, որում ընդգրկվում են՝

1) լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

2) հանրային ֆինանսների կառավարման ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

3) տնտեսության ճյուղերի զարգացման ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

4) չորս մասնագետ (այդ թվում՝ օտարերկրյա)՝ երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն խորհրդի կազմում կարող են ընդգրկվել լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած այն մասնագետները, որոնք ունեն արվեստի բնագավառում բարձրագույն կրթություն եւ բավարարում են հետեւյալ պայմաններից որեւէ մեկին՝

1) ստացել են միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի մրցանակ.

2) հանդիսանում են միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի համատեղ արտադրության որեւէ ծրագրի մրցանակակիր.

3) ունեն միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ:

Հոդված 12. Ազգային մարմնի տնօրենը

1. Ազգային մարմնի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

2. Տնօրենն ընտրվում է մրցութային կարգով՝ երեք տարի ժամկետով, եւ չի կարող նույն անձն ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել տնօրենի պաշտոնում:

3. Տնօրենի ընտրության մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն եւ արվեստի բնագավառում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացիները:

4. Տնօրենի ընտրության մրցույթի արդյունքներով լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած երեք թեկնածուներից տնօրեն է ընտրվում այն թեկնածուն, որի՝ կինեմատոգրաֆիայի ոլորտի բարեփոխման ու զարգացման ծրագիրն արժանանում է խորհրդի հավանությանը:

5. Տնօրենը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից:

ԳԼՈՒԽ 4

ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԸ, ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻԼՄԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 13. Ազգային ֆիլմը

1. Ֆիլմը համարվում է ազգային ֆիլմ, եթե բավարարում է հետեւյալ պայմաններին.

1) ստեղծագործական խմբի մեծամասնությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

2) սցենարի հեղինակը եւ (կամ) բեմադրող ռեժիսորը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

3) ֆիլմարտադրությանը մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրող:

2. Սույն օրենքի ուժով ազգային ֆիլմ են համարվում նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստեղծված եւ սույն հոդվածի 1-ին մասի պահանջը բավարարող ֆիլմերը (այդ թվում՝ համատեղ արտադրության), ինչպես նաեւ այն ֆիլմերը, որոնց գույքային իրավունքները ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը:

Հոդված 14. Ազգային ֆիլմի վիճակագրական հաշվառումը եւ ֆիլմի պահպանությունը

1. Ազգային ֆիլմի վիճակագրական հաշվառումը կազմակերպելու նպատակով ազգային ֆիլմի, դրա ստեղծագործական խմբի ու ֆիլմարտադրողների մասին տեղեկատվությունը ազգային մարմինը հավաքագրում եւ գրանցում է ազգային կինոռեեստրում՝ կառավարության սահմանած կարգով:

2. Ֆիլմի պահպանությունը, հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների պաշտպանությունը եւ կինոժառանգության հանրային օգտագործումը կազմակերպելու նպատակով ազգային ֆիլմի փաստաթղթերը, այդ թվում՝ ֆիլմի հիմնանյութերն ու ֆիլմի բնօրինակը օրենքով սահմանված կարգով հանձնվում են պետական արխիվ՝ մշտական պահպանության:

ԳԼՈՒԽ 5

ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՖԻԼՄԻ ՎԱՐՁՈՒՅԹԸ ԵՎ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

Հոդված 15. Ֆիլմարտադրությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ ներդրմամբ ֆիլմարտադրություն իրականացնելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր եւ ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները հավաստագրի հիման վրա ձեռք բերել մատակարարից դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով:

2. Հայաստանի Հանրապետության հանրային տարածքներում ֆիլմարտադրությունն իրականացվում է հասարակական կարգի պահպանման, անվտանգության, անխափան երթեւեկության եւ ազատ տեղաշարժի ապահովման, այլոց առողջության եւ իրավունքների պաշտպանության, ընդհանուր պատասխանատվության եւ դժբախտ պատահարներից ապահովագրության, պետական կամ հանրային գույքի օգտագործման եւ բնության պահպանության հետ կապված օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Ֆիլմարտադրությունը համարվում է համատեղ արտադրություն, եթե բավարարում է հետեւյալ պայմաններին.

1) ներառում է մասնակցության առավելագույն մասը ներկայացնող ֆիլմարտադրող, որը ստեղծագործական եւ տեխնիկական փաստացի մասնակցություն է ունենում ֆիլմարտադրության գործընթացում եւ բավարարում է իր երկրում համատեղ արտադրության ֆիլմը ազգային ստեղծագործություն ճանաչելու պայմանները,

2) ներառում է մասնակցության նվազագույն մասը ներկայացնող մեկ կամ մի քանի ֆիլմարտադրող,

3) առկա է համատեղ արտադրության պայմանագիր, որն ունի եկամուտների բաշխմանը վերաբերող դրույթներ:

4. Համատեղ արտադրության ֆիլմն օգտվում է սույն օրենքի համաձայն ազգային ֆիլմին վերապահվող առավելություններից:

Հոդված 16. Ֆիլմի վարձույթը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի վարձույթն իրականացվում է վարձույթի վկայականի հիման վրա:

2. Վարձույթ իրականացնողին վարձույթի վկայական տրամադրվում է, եթե ֆիլմը բավարարում է հետեւյալ պայմաններին.

1) կատարված է ֆիլմի դասակարգումը եւ տարիքային սահմանափակման մասին նշումը՝ կառավարության սահմանած կարգով,

2) կատարված է օտարալեզու ֆիլմի հայերեն կրկնօրինակումը եւ (կամ) տեսանելի ու հստակ ենթագրումը, բացառությամբ՝ ֆիլմում հնչող երաժշտական ստեղծագործությունների, ինչպես նաեւ այն դրվագների, որոնք էական չեն կամ ըստ ստեղծագործական մտահղացման պետք է լինեն օտարալեզու:

3. Սույն հոդվածի 2-ին մասի 2-րդ կետի պահանջը չի տարածվում՝

1) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող գիտական, մշակութային, կրթական, ճանաչողական ու այլ նմանատիպ ծրագրերի եւ օտար լեզուների իմացության բարելավման կամ ուսուցման համար նախատեսված ֆիլմերի վրա.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների եւ կինոփառատոների ու կինոարվեստի այլ միջոցառումների շրջանակում ցուցադրման համար նախատեսված ֆիլմերի վրա.

3) արբանյակային կամ մալուխային կապի միջոցով հեռարձակվող ֆիլմերի վրա:

Հոդված 17. Ֆիլմի ցուցադրումը

1. Ազգային ֆիլմերի ցուցադրումը մեկ ֆիլմ ցուցադրողի կողմից չի կարող պակաս լինել ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման 20 տոկոսից:

2. Հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների 10 տոկոսի չափով ֆիլմ ցուցադրողները կատարում են հատկացում դրամագլխին՝ կառավարության սահմանած կարգով:

3. Հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների մասին տեղեկությունները ֆիլմ ցուցադրողները տրամադրում են ազգային մարմնին՝ կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՁՈՒՅԹԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 18. Հավաստագրի տրամադրումն ու գործողության դադարեցումը

1. Հավաստագիր ստանալու համար ֆիլմարտադրողը լիազորված պետական մարմին է ներկայացնում.

1) հավաստագիր ստանալու հայտ,

2) հեղինակային իրավունքի վերաբերյալ հայտարարություն,

3) ֆիլմի համառոտ նկարագիրը եւ ֆիլմարտադրության ժամանակացույցը,

4) ֆիլմի ստեղծագործական ??եւ տեխնիկական ներդրումների ցուցակը,

5) ֆիլմի նախահաշիվը եւ ֆինանսավորման պլանը:

2. Հավաստագրի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը նախկինում խախտել է օրենքով սահմանված պահանջները:

3. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

3) ներկայացվել է հավաստագրի գործողությունը դադարեցնելու դիմում:

4. Հավաստագիրը տրամադրում է լիազորված պետական մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

Հոդված 19. Համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրումն ու դադարեցումը

1. Համատեղ արտադրության նախնական կարգավիճակ ստանալու համար մինչեւ ֆիլմի նկարահանումը ֆիլմարտադրողը ազգային մարմին է ներկայացնում.

1) համատեղ արտադրության նախնական կարգավիճակ ստանալու հայտ,

2) հեղինակային իրավունքի վերաբերյալ հայտարարություն,

3) ֆիլմի համառոտ նկարագիրը եւ ֆիլմարտադրության նախնական ժամանակացույցը,

4) ֆիլմի ստեղծագործական ??եւ տեխնիկական ներդրումների նախնական ցուցակը,

5) ֆիլմի նախահաշիվը եւ ֆինանսավորման նախնական պլանը,

6) համատեղ արտադրության պայմանագիրը կամ համագործակցության հուշագիրը:

2. Համատեղ արտադրության վերջնական կարգավիճակ ստանալու համար ֆիլմի նկարահանման ավարտից հետո ֆիլմարտադրողը ազգային մարմին է ներկայացնում.

1) համատեղ արտադրության վերջնական կարգավիճակ ստանալու հայտ,

2) հեղինակային իրավունքի պայմանագրերի ամբողջական փաթեթը,

3) ֆիլմի վերջնական սցենարը եւ համատեղ արտադրության պայմանագիրը,

4) ֆիլմի ստեղծագործական ??եւ տեխնիկական ներդրումների վերջնական ցուցակը,

5) ֆիլմի ծախսերի հաշվետվությունը եւ ֆինանսավորման վերջնական պլանը:

3. Համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:

4. Համատեղ արտադրության կարգավիճակը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

5. Համատեղ արտադրության կարգավիճակը տրամադրում է ազգային մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

Հոդված 20. Վարձույթի վկայականի տրամադրումն ու գործողության դադարեցումը

1. Վարձույթի վկայական ստանալու համար վարձույթ իրականացնողը ազգային մարմին է ներկայացնում.

1) վարձույթի վկայական ստանալու հայտ,

2) հեղինակային իրավունքի, ֆիլմի դասակարգման, ինչպես նաեւ օտարալեզու ֆիլմի կրկնօրինակման կամ ենթագրման վերաբերյալ հայտարարություն:

2. Վարձույթի վկայականի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:

3. Վարձույթի վկայականի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

4. Վարձույթի վկայականը տրամադրում է ազգային մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 7

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ԴՐԱՄԱԳԼԽԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 21. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցությունը

1. Մատակարարների՝ հաշվետու եւ դրան հաջորդող տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է հավաստագրի հիման վրա ֆիլմարտադրողներին մատուցված ծառայությունների մասով չստացած եկամտի (նվազագույն շահավետ գնի եւ իրացման գնի տարբերության) 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան այդ ծառայությունների նվազագույն շահավետ գնի 20 տոկոսը:

2. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամկետի ընթացքում առանց մուտքի վիզայի գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում եւ առանց աշխատանքի թույլտվության մասնակցել ֆիլմարտադրության աշխատանքներին՝ կառավարության սահմանած կարգով:

5. Ֆիլմարտադրության եւ կինոարվեստի միջոցառումների շրջանակներում ապրանքների ժամանակավոր ներմուծման ու արտահանման դեպքում գործում է հայտարարագրման պարզեցված կարգ եւ սահմանվում է հայտարարագրի ընդունման պահից չորս ժամվա ընթացքում ապրանքների բաց թողնման ժամկետ՝ առանց մաքսային վճարների վճարման:

3. Աջակցություն տրամադրողների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում է դրամագլխին կատարվող հատկացումների գումարը:

4. Շահառուների հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չեն համարվում կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից եւ դրամագլխից տրամադրվող գումարները:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ֆիլմ ցուցադրողների հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չեն համարվում հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացվող եկամուտները:

Հոդված 22. Պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորումը

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական ֆինանսավորումն իրականացվում է լիազորված պետական մարմնի հաստատած ծրագրով՝ տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

2. Պետական ֆինանսավորումը չի հանդիսանում պետական պատվեր:

3. Պետական ֆինանսավորումն իրականացվում է կառավարության կողմից հաստատված մասնաբաժնի եւ սահմանաչափի համաձայն, որոնք սահմանվում են առանձին՝ ըստ.

1) խաղարկային, վավերագրական եւ անիմացիոն անվանակարգերի,

2) լիամետրաժ ֆիլմ եւ կարճամետրաժ ֆիլմ տեսակների,

3) ֆիլմի զարգացման, արտադրության, հետարտադրության եւ հանրությանը ներկայացման, այդ թվում՝ կինոփառատոներին մասնակցության փուլերի,

4) ազգային ֆիլմ եւ նվազագույն չափով մասնակցությամբ համատեղ արտադրության ֆիլմ կարգավիճակների,

5) դեբյուտային ֆիլմ եւ այլ ծրագրերի,

6) մանկապատանեկան ֆիլմ եւ այլ քվոտաների:

4. Պետական ֆինանսավորման համար նախատեսված միջոցները տվյալ տարվա ընթացքում ամբողջությամբ շահառուներին չտրամադրելը հիմք չէ հաջորդ տարիների պետական ֆինանսավորման նպատակով միջոցներ չնախատեսելու կամ պակաս նախատեսելու համար:

5. Պետական ֆինանսավորման համար նախատեսված եւ տվյալ տարվա ընթացքում շահառուներին չտրամադրված գումարները հատկացվում են դրամագլխին:

6. Կինոտարեգրության ստեղծման, կինոժառանգության պահպանման եւ ազգային մարմնի ընթացիկ գործունեության ապահովման նպատակով ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից կատարվող այլ հատկացումների հաշվին:

Հոդված 23. Դրամագլխի միջոցների հաշվին ֆինանսավորումը

1. Դրամագլխի միջոցների հաշվին ֆինանսավորումն իրականացվում է սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 22-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հատկացումների, ինչպես նաեւ օրենքով չազելված այլ աղբյուրներից կատարվող հատկացումների հաշվին:

2. Դրամագլխի գումարները պահվում են կենտրոնական գանձապետարանում ազգային մարմնի անվամբ բացված հաշվում եւ բացառապես օգտագործվում են ազգային ֆիլմերի ստեղծման, տարածման, առաջխաղացման եւ մրցունակության բարձրացման նպատակով:

3. Ազգային մարմինը վարում է առանձնացված հաշվառում դրամագլխին հատկացումների եւ դրամագլխի օգտագործման մասով՝ դրանց վերաբերյալ տեղեկություններն արտացոլելով խորհրդին ներկայացվող հաշվետվություններում:

Հոդված 24. Մրցույթ անցկացնելու կարգն ու պայմանները

1. Պետական բյուջեի եւ դրամագլխի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է կառավարության սահմանած կարգով անցկացվող մրցույթի արդյունքում:

2. Մրցույթներն անցկացվում են տարեկան առնվազն երկու անգամ՝ ազգային մարմնի սահմանած ժամանակացույցի համաձայն:

3. Լիազորված պետական մարմնի հաստատած կանոնակարգի համաձայն ձեւավորվում են երկու կամ ավելի ֆիլմի կատեգորիաներում առանձին անցկացվող մրցույթների՝ առնվազն հինգ անդամից բաղկացած հանձնախմբեր:

4. Հանձնախմբում ընդգրկվում են լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած այն մասնագետները (այդ թվում՝ օտարերկրյա), որոնք ունեն միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ եւ արվեստի բնագավառում բարձրագույն կրթություն, կամ ստացել են միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի մրցանակ եւ բավարարում են հետեւյալ պայմաններից որեւէ մեկին՝

1) ունեն համատեղ արտադրություն իրականացնելու փորձ.

2) հանդիսանում են միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի համատեղ արտադրության որեւէ ծրագրի՝ պաշտոնական ընտրությունն անցած մասնակից.

3) ունեն միջազգային կարգավիճակ ունեցող կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ:

5. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրողները:

6. Մրցույթին ներկայացված հայտերը առնվազն պետք է բավարարեն հետեւյալ պայմաններին.

1) սցենարի հիմքի վրա ֆիլմ ստեղծելու իրավունքի առկայություն,

2) ֆիլմարտադրությանը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրողի մասնակցություն,

3) ստեղծագործական խմբում Հայաստանի Հանրապետության քաղաքացու առկայություն:

7. Մրցույթին ներկայացված հայտերը գնահատվում են հետեւյալ չափանիշներով՝

1) ֆիլմի գեղագիտական-գեղարվեստական արժեքը.

2) ֆիլմի միջազգային ճանաչման հնարավորությունը.

3) ֆիլմի նախագծի իրականացվելիության ներուժը.

4) ֆիլմի նախագծի տնտեսական հիմնավորումը.

5) ֆիլմի առաջխաղացման եւ հանրությանը ներկայացման հեռանկարը:

ԳԼՈՒԽ 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 25. Միջազգային համագործակցությունը

1. Կինեմատոգրաֆիայի միջազգային համագործակցությունն իրականացվում է միջազգային պայմանագրերի եւ օրենքի համաձայն, որը նախատեսում է՝

1) համատեղ արտադրության իրականացում.

2) օտարերկրյա պետություններում կազմակերպվող կինոփառատոներին եւ կինոարվեստի այլ միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցության ապահովում.

3) օտարերկրյա պետություններում ազգային ֆիլմի օրերի, շաբաթների եւ կինոարվեստի այլ միջոցառումների կազմակերպում.

4) Հայաստանի Հանրապետությունում անցկացվող կինոփառատոների եւ կինոարվեստի այլ միջոցառումներին օտարերկրյա ֆիլմարտադրողների եւ միջազգային կազմակերպությունների մասնակցության ապահովում.

5) միջազգային համագործակցության այլ ձեւեր:

ԳԼՈՒԽ 9

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 26. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 10

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 27. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 10-24-րդ հոդվածների դրույթները գործելու են դրանք կանոնակարգող կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

3. Սույն օրենքով նախատեսված կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-910/-26.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեյալ բովանդակությամբ 189.25-րդ հոդվածով.

«*Հոդված 189.25. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժնի պահանջը խախտելը*

1. Ազգային ֆիլմերի մասնաբաժինն ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ 20 տոկոս կազմելու պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետեյալ բովանդակությամբ 189.26-րդ հոդվածով.

«*Հոդված 189.26. Ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու պահանջը խախտելը*

1.Հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից եւ կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների վերաբերյալ կեղծ տեղեկություն տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 189.27-րդ հոդվածով.

«Հոդված 189.27. Առանց վարձույթի վկայականի ֆիլմի վարձույթ իրականացնելը

1. Առանց վարձույթի վկայականի ֆիլմի վարձույթ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետը «189.9-189.10 հոդվածներով,» բառերից հետո լրացնել «189.25-189.27 հոդվածներով,» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-910²-26.03.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 25-27-րդ կետերով.

«25) կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից եւ ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխից տրամադրվող գումարները.

26) հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից ստացվող եկամուտները՝ մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.

27) կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացվող եկամուտները՝ մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18-19-րդ կետերով.

«18) հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի գծով կատարվող ծախսերը՝ մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.

19) կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման գծով կատարվող ծախսերը՝ մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին կատարվող մասհանումները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասը «նվազեցվում է» բառից հետո լրացնել «այլ ռեզիդենտ առեւտրային կազմակերպությանը կամ» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կինեմատոգրաֆիայի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆիայի ոլորտի համապարփակ կարգավորման եւ միասնական իրավական հիմքերի սահմանման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական ֆինանսավորման, օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հեղինակային ու հարակից իրավունքների պաշտպանության, ֆիլմերի վիճակագրական հաշվառման, ֆիլմի պահպանության, դասակարգման, Հայաստանի Հանրապետության կառավարության, մշակույթի ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի, կինեմատոգրաֆիայի ոլորում գործունեություն իրականացնող անձանց հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ օտարերկրյա եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանն առնչվող հարցերը:

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները

Մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կինեմատոգրաֆիայի ոլորտը կարգավորող իրավական ակտ, որի արդյունքում մի շարք կարեւոր հարաբերություններ օրենսդրական կարգավորում չեն ստացել, իսկ առկա կարգավորումները չեն ապահովում եզրույթների օգտագործման միասնականությունը: Կարգավորված չեն ֆիլմարտադրության, ֆիլմերի վարձույթի, ֆիլմի ցուցադրման, ֆիլմի՝ միջազգային կինոփառատոներին մասնակցության պետական ֆինանսավորման եւ պետական աջակցության այլ ձեւերը: Որեւէ կերպ չի խրախուսվում օտարերկրյա ֆիլմերի նկարահանումը Հայաստանի Հանրապետությունում:

Կինոթատրոններում եւ հեռուստատեսությամբ ֆիլմերի հրապարակային ցուցադրումը իրականացվում է առանց տարիքային սահմանափակումների մասին նշում կատարելու, ինչը կարող է բացասաբար ազդել բարոյական նորմերի պահպանման եւ երեխաների իրավունքների պաշտպանության վրա:

Կարգավորված չէ ֆիլմերի վարձույթի իրականացման հետ կապված հարցերը, ըստ որի ֆիլմերի վարձույթը կիրականացվի օրինական դաշտում եւ կպաշտպանվեն հեղինակային ու հարակից իրավունքները:

Միաժամանակ, օրենքով կկանոնակարգվի կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունները, որի համաձայն հիշյալ մարմնի գործունեությունը կկարգավորվի օրենքով: Բացի այդ կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի կողմից կինեմատոգրաֆիայի ոլորտին ֆինանսավորելու համար կընձեռվի հնարավորություն ներգրավելու լրացուցիչ ֆինանսական միջոցներ ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխի ձեւավորման արդյունքում:

Կարգավորման նպատակը եւ ակնկալվող արդյունքը

Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման եւ ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի իրավական դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը եւ հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման եւ կիրարկման համար:

Օրենքների նախագծերը մշակվել են հիմք ընդունելով մի շարք երկրներում կինեմատոգրաֆիայի ոլորտի օրենսդրական կարգավորման փորձը: Մասնավորապես ուսումնասիրվել են Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ռումինիայի, Կանադայի, Չեխիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Վրաստանի, Բուլղարիայի, Իսլանդիայի, Ֆրանսիայի եւ մի շարք այլ երկրների կինեմատոգրաֆիայի ոլորտը կարգավորող իրավական ակտեր, որտեղ օրենսդրորեն ճանաչվում է կինեմատոգրաֆիայի հատուկ նշանակությունը եւ առանձնահատուկ օրենսդրական կարգավորում է նախատեսվում ոլորտի պետական աջակցության համար:

Միջազգային փորձը հատկապես ուսումնասիրվել է հարկային արտոնությունների, պետական ֆինանսավորման, վարձույթի վկայականի, կինոմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունների, միջազգային համագործակցության եւ մի շարք այլ կարեւոր հարցերի մասով:

Օրենքների նախագծերը նպատակ ունեն.

- հստակեցնել կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմնի եւ ազգային մարմնի լիազորությունները,
- սահմանել կինեմատոգրաֆիայի պետական աջակցության իրականացման հիմնական կանոնները,սահմանել ֆիլմարտադրության, ֆիլմի ցուցադրման, ֆիլմի վարձույթի, ֆիլմի պահպանության եւ վիճակագրական հաշվառման հիմնական կանոնները,
- սահմանել հավաստագրի, վարձույթի վկայականի եւ համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման հիմանական կանոնները,
- սահմանել ազգային ֆիլմերի ստեղծման եւ առաջխաղացման նպատակով հատկացումների կատարման եւ բարենպաստ պայմանների ստեղծման հիմնական կանոնները:

Ակնկալվում է, որ նշված օրենքների նախագծերի ընդունումը նոր խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում կինեմատոգրաֆիայի զարգացման համար, մասնավորապես՝ օրենսդրական փաթեթի ընդունումը կնպաստի.

- կինեմատոգրաֆիայի պետական աջակցության թափանցիկության եւ արդյունավետության բարձրացմանը,
- կինեմատոգրաֆիայի ոլորտում շահերի բախման եւ պետական միջամտության բացառմանը, հեղինակային եւ հարակից իրավունքների պաշտպանությանը,
- կինեմատոգրաֆիայի ոլորտում տնտեսական գործունեության ակտիվության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- ֆիլմարտադրության համար գրավիչ միջավայրի ու բարենպաստ պայմանների ստեղծմանը եւ օտարերկրյա ներդրումների ներգրավմանը,
- ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանը եւ մրցունակության բարձրացմանը,
- կինեմատոգրաֆիայի ոլորտում միջազգային համագործակցության եւ համատեղ արտադրության զարգացմանը,
- Հայաստանի Հանրապետության, հայկական մշակույթի եւ պատմության ճանաչելիության բարձրացմանը: